



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2003 թվականին

### **Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը (ՀՆԱ):**

ՀՆԱ-ի արտադրության ծավալն ընթացիկ գներով, 2003թ. կազմել է 1623336.2 մլն.դրամ, իսկ աճի տեմպը 2002թ. համեմատ կազմել է 113.9%: ՀՆԱ-ի աճը պայմանավորված է հիմնականում տնտեսության 5 բազային ճյուղերի աճով, որոնց հաշվին ապահովվել է ավելացված արժեքի արտադրության 11.5% աճ՝ 2002թ. 9.5%-ի դիմաց: Դրա հետ մեկտեղ, ՀՆԱ-ի կառուցվածքում այդ ճյուղերի տեսակարար կշիռը 2002թ. համեմատ ավելացել է 1.7 տոկոսային կետով:

### **Արդյունաբերություն:**

Հանրապետությունում 2003թ., ընթացիկ գներով, թողարկվել է 426053.5 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 420006.2 մլն. դրամի արտադրանք՝ ընդ որում. ԱՊՀ երկրներում՝ 51385.5 մլն դրամի, այլ երկրներում՝ 98806.3 մլն դրամի արտադրանք: 2002թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 115.1 %, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 118.4%:

### **Գյուղատնտեսություն:**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2003թ., ընթացիկ գներով, կազմել է 410.1 մլրդ. դրամ, որը 2002թ. մակարդակը գերազանցել է 4.3%-ով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը պայմանավորված է 2001թ. համեմատ ինչպես բուսաբուծական հիմնական մշակաբույսերի (բացառությամբ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի և խաղողի), այնպես էլ անասնաբուծական հիմնական մթերքի համախառն արտադրանքի ավելացմամբ: Բուսաբուծության համախառն արտադրանքի աճը 2002թ. համեմատ կազմել է 4.4 %: Անասնաբուծության համախառն արտադրանքը գերազանցել է 2002թ. մակարդակը 4.3%-ով:

### **Շինարարություն:**

Բնակարանային շինարարություն: 2003թ. հանրապետությունում պետական բյուջեի, մարդասիրական օգնության և բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 512020 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 761 բնակելի շենք՝ կամ 2002թ. գործարկված մակերեսի 180 %-ը:

Իրականացված շինարարության ծավալ: Հանրապետությունում 2003թ. իրականացվել է 237843.6 մլն.դրամի շինարարություն, կամ 2002թ. իրականացվածի 141%, այդ թվում. արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 82153.9 մլն. դրամի (121%): Իրականացված շինարարության ծավալում շինմնտաժային աշխատանքները կազմել են 212332.9 մլն.դրամ (149%), որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 60535.6 մլն. դրամ (127%):

Հիմնական միջոցների գործարկում: 2003թ. գործարկվել են 221408.0 մլն.դրամի հիմնական միջոցներ, այդ թվում արտադրական նշանակության գծով՝ 66956.7 մլն.դրամ:

**Տրանսպորտ:**

Բեռնափոխադրումներ: 2003թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. նկատմամբ նվազել է 6.2 %: 2003թ. բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների տեսակարար կշիռը կազմել է 30.1 %, ավտոմոբիլայինը՝ 57.9 %, օդայինը՝ 0.1 %, խողովակաշարայինը՝ 11.9 %:

Բեռնաշրջանառություն: 2003թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2002թ. նկատմամբ աճել է 13.6 %-ով:

Ուղևորափոխադրումներ: 2003թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2002թ. ցուցանիշի նկատմամբ աճել է 11.0 %: Ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.6 %, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 85.5 %, օդային տրանսպորտինը 0.5 % և էլեկտրատրանսպորտինը 13.4 %:

Ուղևորաշրջանառություն: 2003թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2002թ. նկատմամբ աճել է 4.0 %-ով:

**Կապ:**

Հանրապետությունում 2003թ. բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալը ընթացիկ գներով կազմել է 54476.5 մլն. դրամ, որը 2002թ. նկատմամբ համադրելի գներով աճել է 8.0 %-ով:

**Սպառողական շուկա:**

Ներքին առևտուր: ՀՀ սպառողական շուկան 2003թ. բնութագրվել է կայուն աճի միտումով: Նույն ժամանակաշրջանում սպառողական շուկայի ընդհանուր ծավալում արձանագրվել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ՝ I եռամսյակի 73.6 %-ից մինչև IV եռամսյակի 78.3 %-ը: 2003թ. սպառողական շուկայի ծավալը 2002թ. նույն ցուցանիշի նկատմամբ կազմել է 112.9 %:

Մանրածախ առևտուր: 2003թ. ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 710.2մլրդ. դրամ, որը 2002թ. նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 14.5-ով: ՀՀ մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալի 83.9 %-ը (595801.6 մլն.դրամ) ապահովել են ք.Երևանի մանրածախ առևտրի գործող օբյեկտները, որը բացատրվում է այն հանգամանքով, որ հանրապետության մի շարք մարզերի (հիմնականում ք.Երևանին մոտ գտնվող) բնակչությունն ապրանքների ձեռքբերման պահանջարկի մի մասը բավարարում է նաև ք. Երևանի առևտրի օբյեկտներում:

Բնակչությանը մատուցված ծառայություններ: 2003թ. հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 216.7 մլրդ.դրամ, որը 2002թ. նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 8.9%-ով: Կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 3318.4 մլն. դրամ, որը 2002թ. նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 38.5%-ով:

2003թ. բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 78.2%-ը (169495.9 մլն.դրամ) բաժին է ընկել ք. Երևանին, մնացածը՝ 21.8% (47171.9 մլն.դրամ)՝ մյուս մարզերին:

### **Սպառողական գներ:**

2003թ. սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.7%, ինչը 0.55 տոկոսային կետով բարձր է 2002թ. միջին ամսական հավելաճից (0.15%):

### **Ջրաղվաժուրյուն:**

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 2003թ. հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1236.4 հազ. մարդ, որի 89.9%-ը կամ 1111.6 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 10.1%-ը կամ 124.8 հազ. մարդ չեն ունեցել կայուն աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

*Գործազրկության մակարդակը*, հաշվարկված որպես զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2003թ. դեկտեմբերին կազմել է 9.8% և նոյեմբերի նկատմամբ նվազել 0.1%-ով:

### **Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր:**

Բնակչության դրամական եկամուտները 2003թ. կազմել են 1163637.4 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 1158887.9 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2002թ. համեմատ կազմել են, համապատասխանաբար՝ 115.1 և 117.5%: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2003թ.-ին 2002թ. նկատմամբ աճել են 9.1%-ով:

### **Աշխատանքի վարձատրություն:**

2003թ. զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 34783 դրամ և 2002թ. համեմատ ավելացել 127.3%-ով: Ընդ որում, բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններում աշխատողների աշխատավարձը կազմել է 20627 դրամ և 2002թ. համեմատ ավելացել 29.8%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում աշխատողներինը համապատասխանաբար՝ 45224 դրամ և 23.0%-ով:

### **Արտաքին առևտուր:**

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2003թ., ընթացիկ գներով, կազմել է 1136394.4 մլն.դրամ կամ 1965.1 մլն.դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը՝ 396465.6 մլն. դրամ (685.6 մլն.դոլար) և ներմուծումը՝ 739928.8 մլն.դրամ (1279.5 մլն. դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 343463.2 մլն.դրամով (593.9 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների՝ 315384.2 մլն. դրամով (545.5 մլն. դոլարով):

2003թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 56.4%-ն իրականացվել է ք.Երևանում, տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից, 29.8%-ը՝ Կոտայքի մարզի, 3.9%-ը՝ Սյունիքի մարզի, 2.0%-ը՝ Լոռու մարզի կազմակերպությունների կողմից: ՀՀ մյուս մարզերի արտաքին առևտրաշրջանառության տեսակարար կշիռը չի գերազանցել 4.9%-ը: